

Մամուլի հաղորդագրություն

17.05.2018 թ.

ՔՐԱՖ ՍՄԱՐԹ ԿԵՆՏՐՈՆՆ ԻՐ ՂՄՆԵՐՆ Է ԲԱԾՈՒՄ 10 ՕՐԻԳ

2018 թ. մայիսի 27-ին Լոռու մարզի Դեբետ համայնքում **բացվելու է Հայաստանի մանուկներ հիմնադրամի (ՔՐԱՖ) ՍՄԱՐԹ կենտրոնը:**

ՍՄԱՐԹ նորարարական հայեցակարգը փոխում է գյուղական Հայաստանի պատկերը՝ այն դարձնելով միջազգային համայնքի անքակտելի մաս: 5 միլիոն ԱՄՆ դոլարի ներդրմամբ այս ծրագիրը նպատակ ունի զարգացնելու տեղական ռեսուրսները և այն համայնքներում կիրառելու հնարավորություններ ստեղծելու:

ՔՐԱՖ ՍՄԱՐԹ-ը ոչ ֆորմալ կրթության համապարփակ միջավայր է: Այն հավասար և համարժեք հնարավորություններ է ապահովում գյուղերի՝ երեք տարեկանից բարձր 150 հազար երիտասարդների և մեծահասակների համար:

ՍՄԱՐԹ կենտրոնի հայեցակարգի **չորս** հիմնասյուներն են **նորարարությունը և ստեղծագործականությունը, լեզուն և հաղորդակցությունը, ձեռներեցությունը և տեղական տնտեսական զարգացումը, ակտիվ քաղաքացիությունը և անձնային զարգացումը:**

Տեղեկատվական տեխնոլոգիաները և օտար լեզուն ՍՄԱՐԹ ծրագրերի ծրագրերի և ուսուցման նյութերի հիմքում են:

Ռոբոտիկայի ու ծրագրավորման ոլորտում ՍՄԱՐԹ-ի տարածաշրջանային բացառիկ գործընկերն է ձեռնարկությունների ռեսուրսների կառավարման ավտոմատացված **SAP ընկերության Next-Gen** լաբորատորիան: Արվեստի ստուդիայում նորարարական մոտեցումների զարգացման գործընկերը **Գաֆիսձեան արվեստի կենտրոնն** է:

ՔՐԱՖ ՍՄԱՐԹ կենտրոնի բացումն իրենց ներկայությամբ պատվելու են Հայաստանի մանուկներ հիմնադրամի **բարերարները, աջակիցները, գործընկերները, Հայաստանի ղեկավարները, դեսպանները:**

Հայաստանի մանուկներ հիմնադրամը (COAF) բարեգործական կազմակերպություն է, որի նպատակն է բարձրացնել Հայաստանի գյուղաբնակների կյանքի որակը համայնքային զարգացման երեխայակենտրոն ծրագրերի միջոցով: Հիմնադրամի համակողմանի ծրագրային մոդելի իրագործումը սկսվել է 2004թ., և այդ ժամանակից ի վեր իրականացվում են կրթական, առողջապահական, սոցիալական և տնտեսական ծրագրեր, ինչպես նաև հիմնանորոգվում են համայնքների համար կենսական նշանակություն ունեցող



Ենթակառուցվածքները: Այս ծրագրերի շահառուներն են Հայաստանի Արմավիրի, Արագածոտնի, Լոռու, Գեղարքունիքի, Շիրակի և Տավուշի մարզերի 44 համայնքների քավելի քան 67,000 բնակիչները:

2015թ. սկսած՝ COAF-ը մշակել և իրագործում է նոր տեսլական՝ ՍՄԱՐԹ նախաձեռնություն: ՍՄԱՐԹ-ը կրթության միջոցով առաջխաղացում է ապահովելու գյուղական աշխարհի համար, ինչի արդյունքում շահում են անհատները, հասարակությունը և միջավայրը: ՍՄԱՐԹ-ը կդառնա զարգացման օրինակելի մոդել և կկրկնօրինակվի Հայաստանի այլ մարզերում և համայնքներում:

Հայաստանի մանուկներ հիմնադրամ (COAF)
Հեռ՝ 010-502-076
Բջջ՝ 094 30 82 15
Էլ. հասցե՝ coaf@coafkids.org
Կայք՝ www.coafkids.org/